



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(56)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2021

ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԵՆԹԱԴԱՇՏՈՒՄ

ՌՈՒՉԱՆՆԱ ԴՈՒՍՈՅԱՆ

Հիմնաբառեր՝ խոսքային գործունեության իմաստային ենթադաշտ, ասացական, մտածական, զգացական, վարքարտահայտման բառիմաստային խմբեր, համանունություն, բառային, դարձվածային, քերականական համանուններ, հարանունություն, բառային, դարձվածային հարանունություն

Հայագիտության մեջ համանունությունն ու հարանունությունը (ինչպես նաև ձևաիմաստային մյուս խմբերը՝ համանիշ, հականիշ) մինչ այժմ իմաստաբանության մակարդակում դիտարկվել են սուկ իբրև ձևիմաստային խմբեր¹՝ ընդհանրական իմաստով (Առաքելյան և այլք 1979:208-215, Սուքիասյան 1999: 114-122, Խլղաթյան 2009: 167-174 նն):

Հոդվածի նպատակն է համանունությունն ու հարանունությունը՝ իբրև ձևաիմաստային փոխհարաբերության տեսակներ, հետազոտել իմաստային դաշտերի, բառիմաստային խմբերի (այսուհետ՝ **ՔԻԽ**) ուսումնասիրության շրջանակում:

Խոսքային գործունեության իմաստային ենթադաշտում (այսուհետ՝ **ԽԳԻԵ**), ի թիվս այլ երևույթների, մեկնաբանման կարիք ունեն նաև համանունությունն ու հարանունությունը (հետազոտման նյութը **ԽԳԻԵ**-ի **ՔԻԽ**-երի բայերի վերոնշյալ դրսևորումներն են)², որոնց իմաստային առանձնահատկությունների ուսումնասիրությունը հնարավորություն կտա սահմանելու և դասակարգելու **ԽԳԻԵ**-ի **ՔԻԽ**-երի³ հարացուցային և շարակարգային⁴ կապերն ու հարաբերությունները, նրանց հատումներն ու իմաստային առնչությունները, փոխապայմանավորվածությունը,

¹ Բացառություն է Շալունցի թեկնածուական ատենախոսությունը:

² Օգտվել ենք մեր կողմից կազմված **ԽԳԻԵ**-ի համանուն, հարանուն բայերի և դարձվածքների ցանկից:

³ **ԽԳԻԵ**-ում ներառված են ասացական, մտածական, զգացական և վարքարտահայտման **ՔԻԽ**-երը:

⁴ Շարակարգային կապերն ու հարաբերությունները կքննվեն այլ հոդվածում:

գործառության առանձնահատկությունները՝ վերջնարդյունքում դաշտային մակարդակում բացահայտելով բայական բառապաշարի իմաստային խմբավորումների համակարգային կապերն ու փոխհարաբերությունները:

Լեզվաբանների մի մասը բացասական կարծիք ունի համանունության վերաբերյալ՝ համարելով այն բառապաշարում առկա ոչ դրական միտում /Ռ. Բրիջեզ, Ժ. Ժիլերոն, Լ. Բուլխովսկի, Ա. Ռեֆորմատսկի և այլք/: Սակայն այն արդեն անվիճելի փաստ է և օրինաչափ երևույթ, որովհետև, ըստ Սոսյուրի, լեզվական մեխանիզմը պատվում է բացառապես նույնությունների և տարբերությունների շուրջ, ըստ Ռ. Բուդաղովի՝ համանունությունը չընդունող լեզվաբանները իրավացի կլինեին, եթե լեզուն մաթեմատիկական համակարգ լիներ (Շալունց 1977: 28-30), մինչդեռ այն ստեղծագործական բնույթ ունի, և նրանում առկա երևույթներն ունեն իրենց բնականոն զարգացման լեզվական և արտալեզվական օրինաչափությունները: Բացի դրանից՝ համանվանական իմաստները, բացահայտվելով խոսքաշարում, վերացնում են երկիմաստությունը, հետևաբար այն միանգամայն օրինաչափ լեզվաերևույթ է:

Համանունությունը /հուն. homos- նույն, onyma- անուն/ դրսևորվում է որոշ լեզվամիավորների /ձևային/ բառակազմական և բառահարաբերական//, բառերի, բառաձևերի, քերականական կառույցների /ձևական համընկնմամբ, գրությամբ, արտասանությամբ կամ հնչյունակազմով նույնացած տարիմաստ երկանդամ, եռանդամ ևն շարքերով, որոնք ներկայացնում են լեզվական համակարգում առկա ձևիմաստային փոխհարաբերությունների համակարգայնության պատկերը:

Մասնագիտական գրականության մեջ տարբերակվում են բառային, բառաքերականական և քերականական համանուններ (Աղայան 1984: 67):

Հարկ է նշել, սակայն, որ համանունությանը վերաբերող շատ հարցերում /մասնավորապես տեսակների տարբերակման/ միասնականություն չկա, և տարբեր լեզվաբաններ տարբեր կերպ են ներկայացնում երևույթը: Մենք մեր ուսումնասիրության մեջ դիտարկել ենք⁵ բառային և քերականական /ձևաբանական/ համանունությունը. հետազոտության նյութը քաղել ենք Ե. Հ. Գևորգյանի (Գևորգյան 1978), Ռ. Ն. Շալունցի (Շալունց 1980) համանունների, Խ. Գ. Բադիկյանի դարձվածաբանական (Բադիկյան 2002), ինչպես նաև բոլոր այն

⁵ Քննության չենք առել համանվանական այն շարքերը, որոնց մի անդամը բայ է, մյուսը՝ այլ խոսքի մաս/օր.՝ **անարգել/մակբայ/-անարգել/բայ**՝ նկատի ունենալով հոդվածի ծավալը:

բառարաններից, որոնցում առկա են համանուններ, և դրանց հիման վրա կազմել ենք **ԽԳԻԵ**-ում գործառվող համանունների բառային և դարձվածային ցանկը:

Այն ուսումնասիրության նյութը /բայական բառապաշար/ նկատի ունենալով՝ **ԽԳԻԵ**-ում բառային համանուններ ենք համարում անորոշ դերբայով արտահայտված **նույնաձև տարիմաստ** ելակետային /իմա՝ սկզբնաձևային /բայերը/ իմա՝ բառերը//, որոնք բառարանային արձանագրում ունեն, օր.¹ **աղերսել**-աղաչել, խնդրել, **աղերսել**-առնչակցել, առնչել, կապակցել, **բրդոտել**-մանր բրդել, կտրատել, **բրդոտել**- 1. բրդով կեղտոտել, 2. բրդոտվել, բրդակալել, մազակալել, **շրջել**-շրջագայել, զբոսնել, **շրջել**-շուռ տալ, դարձնել, պտտել ևն/:

Բառային համանունության տեսակ է **դարձվածային համանունությունը**, որը հիմնված է **նույնաձև տարիմաստ** դարձվածքների վրա /օր.¹ **գլուխ բերել**-հաջողեցնել, ավարտել, **գլուխ բերել**-երևելի, մեծ գործ կատարել/ երևելի թշնամու գլուխը բերելու հնագույն սովորույթից/, **հացը կտրել**-սեղանակից լինել, մեկի կողմից հյուրասիրվել, **հացը կտրել**-մեկին ապրելու միջոցներից՝ հնարավորություններից զրկել, **ձեռք առնել**-ձեռնարկել, համապատասխան միջոցների դիմել, **ձեռք առնել**-ծաղրի առարկա դարձնել, ծաղրել, ծանակել ևն/:

Քերականական /ձևաբանական/ համանունությունը հիմնված է դիմավոր և անդեմ բայերի տարբեր զուգորդումների վրա /օր.¹ **արի**⁶-**անել** բայի անցյալ կատարյալի եզակի 1-ին դեմքը, **արի-գալ** բայի եզակի հրամայականը/ **դիմավոր+դիմավոր կաղապար**//, **լողացել-լողալ** և **լողացել-լողանալ** բայերի վաղակատար ձևաբայերը, **գնում-գնալ** բայի անկատար ձևաբայը, **գնում-գնել** բայի անկատար ձևաբայը/ **անդեմ+անդեմ կաղապար**/, **աղա-աղալ** բայի ըղձական ապառնու եզակի 3-րդ դեմքը, **աղա-աղալ** բայի եզակի հրամայականը, **աղա-աղալ** բայի ժխտական ձևաբայը/ **դիմավոր+դիմավոր+անդեմ կաղապար**//: Ընդ որում՝ **քերականական /ձևաբանական/ համանունությունը** ունի նաև հետևյալ դրսևորումները.

⁶ Այն բայերը, որոնք իրենց հարացուցային առաջնային իմաստով լեզվական մակարդակում պատկանում են բառաիմաստային այլ խմբերի /մասնավորապես՝ «անել»-ը պատկանում է **գործողության** դաշտի **արարման** ենթադաշտին/, երկրորդաբար կամ փոխաբերաբար մտնում են իմաստային որևէ դաշտի /ենթադաշտի եզրային/պերիֆերիկ/ հատվածը /տվյալ դեպքում՝ **խոսքային գործունեության** իմաստային ենթադաշտի **վարքարտահայտման ԲԻԽ**-ի մեջ/ ներակայելով այդ ենթադաշտի իմաստներից որևէ մեկը /օր.¹ Ես դա **արի** /ներակայված է «պատասխանեցի արարքով՝ խոսքով» իմաստը ևն/:

այն արտահայտվում է ինչպես **նույնաձև նույնիմաստ**⁷ բայերի /օր., **տենչալու-անորոշ** դերբայի սեռական հոլովաձևը, **տենչալու-ապակատար ձևաբայ**, **հավատա-հրամայական** եղանակի եզակի 2-րդ դեմքը, **հավատա-ըղձական** ապառնու եզակի 3-րդ դեմքը, **հավատա-ժխտական ձևաբայ**/, այնպես էլ **նույնաձև տարիմաստ** բայերի **դիմավոր** /եղանակաժամանակային/ և **անդեմ** տարբեր զուգորդումներով /օր., **կտրվեի-դալ** բայի ենթադրական անցյալը, **կտրվեի-կտրել** բայի ըղձական ապառնին, **տար-դալ** բայի ըղձական անցյալի եզակի 3-րդ դեմքը, **տար-դանել** բայի եզակի հրամայականը, **եղել 1.-կալը շրջել**, 2. **կրկնարոր անել** բայերի անորոշ դերբայները, **եղել-լինել** բայի վաղակատար ձևաբայը ևն//:

Այստեղ հարկ է նշել, որ համանունության մի եզրը պատկանում է **ԽԳԻԵ-ին** /մասնավորապես՝ նշված օրինակները վարքարտահայտման բառաիմաստային խմբի բայեր են/, իսկ նրանց զույգերը՝ **գործողության** դաշտին /շարժման բայեր են/, որը վկայում է իմաստային դաշտերի /ենթադաշտերի հատման մասին, այսինքն՝ **գործողության** դաշտի և **խոսքային գործունեության** իմաստային ենթադաշտի ⁸ փոխհարաբերության, որն էլ հետագայում առաջացնում է եզրային /պերիֆերիկ/ բայեր (Դոխոյան 2014: 79), որոնք, խոսքային գործունեության ընթացքում հաճախական կիրառության պարագայում փոխաբերացման հիմքի վրա ստանալով այլ իմաստներ, հարստացնում և համալրում են բառաիմաստային համապատասխան խմբերն ու դաշտերը: Օր.՝ **կտրվեի-ն՝ կտրել-ը**, **գործողության** դաշտի՝ «**առարկայի վրա ֆիզիկական ներգործության**» ենթադաշտի՝ բաժանման բառաիմաստային խմբի բայ է, որը իր երկրորդային հետևյալ իմաստներով/օր.՝ մի տեղով անցնել՝ տարածությունը երկու մասի բաժանելով /կտրել նախասրահը և մտնել հյուրասրահ/, պատրաստել /աղյուս կտրել/, զրկել, խլել/հացը կտրել/, վիրահատությամբ հեռացնել /ոտքը կտրել/, ճանապարհը՝ անցումը փակել, ընթացքը արգելել /մայրուղին փակել/, ուժով ձգելով խզել /պարանը կտրել/, բարձրացնել, վերցնել /ոտքը գետնից կտրել/, անջատել, կապը խզել, մեկուսացնել /գորքի երկու թևերը իրարից կտրել/, կոտորել, սպանել, ջարդել /Կտրեց, թափեց..., ով որ ընկավ թրի վրա//, կողոպտել, թալանել/քարվան կտրել/, անցնել, գնալ/ճանապարհ կտրել//, փոխաբերաբար՝ քննության ժամանակ անբավարար գնահատական ստանալ/ համալրում է վարքարտահայտման **ԲԻԽ-ի**, իսկ **ընդհատել/խոսքը կտրել/**, իր խոսքով

⁷ Բառային իմաստով նույնն են, քերականական իմաստներով՝ տարբեր. առաջին օրինակում առկա է հատկանշային իմաստ, երկրորդում՝ գործողության՝ ՌԴ:

⁸ Խոսքային գործունեությունը «գործողություն» իմաստային դաշտի ենթադաշտն է:

զրույցը՝ խոսակցությունն ավարտել իմաստներով /-Իզուր է խոսելը,- կտրեց նա//՝ **ասացական ԲԻՒ-ի, հատելով որոշ ձև տալ, ձևել իմաստով /կտրորից երկու շապկացու կտրեց/՝ մտածական ԲԻՒ-ի, դադարեցնել /երեխայի լացը կտրել /երկրորդային իմաստ/, հեռացնել, շեղել, անջատել /հայացքը չկտրել /փխբ./ իմաստներով՝ զգացական ԲԻՒ-ի հարացույցների եզրային հատվածները: Իսկ կտրվել-ն՝ «տալ» բայը, «հարաբերության» իմաստային դաշտի՝ «տիրապետման» ենթադաշտի՝ «առարկայի փոխանցման» (Matveeva 1988) բառիմաստային խմբի բայ է, բայց նրա կրավորական և չեզոք ձևերը՝ «տրվել», **իրենց հետևյալ իմաստներով** /1. անձնատուր լինել, ենթարկվել, հանձնվել, 2. որևէ բանով գրավվել՝ հրապուրվել, ամբողջ ուշադրությունը՝ ժամանակը մի բանի նվիրել, ամբողջովին կլանվել մի բանով, 3. որևէ մեկի հետ սիրային կապի մեջ լինել /կանանց մասին/, 4. ձեռք բերվել, ստացվել, 5. հաջողվել, գլուխ գալ, 6. յուրացվել /հմտության, գիտելիքների մասին/ **համալրում են վարքարտահայտման**/1, 4, 5-րդ իմաստներով/, **զգացական**/2, 3-րդ իմաստներով/, **մտածական** /6-րդ իմաստով/ **ԲԻՒ-երի** եզրային հատվածները:**

Հանդիպում են նաև, իհարկե, սակավ **բառաքերականական** համանուններ, որոնց ուղիղ ձևերը համահունչ են բազմապատկական կամ կրավորական որոշ կազմությունների: Այսպես, **կարոտել-անձկալ, կարոտել-կարել** բայի բազմապատկականը, **վարվել-վերաբերվել, վարվել-վարել** բայի կրավորականը, **պատվել-հարգել, մեծարել, պատվել-պատել** բայի կրավորականը (Շալունց 1977: 66-67):

Մեր բառացանկում ընդգրկված մոտ երկու հարյուրյակի հասնող համանվանական անխառն շարքերի գերակշռող մասը երկանդամ է /օր.՝ բլբլալ, զուգել, հանգել, ցնծալ, քերթել/, ավելի սակավ՝ եռանդամ /օր., դադել, լուծել, խլիլել, մեկնել, վարել/: Խառը համանվանական շարքերը ևս ընդգրկել ենք՝ ընտրողաբար գրելով միայն բայաձևերը, օր.՝ «**թվում» համանվանական հնգանդամ շարքից** /1. «թիվ» գոյականի եզակի ներգոյականը, 2. «թվել» բայի անկատար ձևաբայը, 3. «թվալ» բայի անկատար ձևաբայը, 4. թվելը, թվարկելը, 5. թվալը, կարծվելը/ (Գևորգյան 1978: 117) **բայական նշանակություններ ունեն երկուսը**: Մեր բառացանկում ընդգրկված են նաև համանվանական այն զույգերն ու եռյակները, որոնց բաղադրիչներից միայն մեկն է ասացական, մտածական, զգացական, վարքարտահայտման բայ, մյուսը/ները/ պատկանում է այլ **ԲԻՒ-ի**: Սակավ են համանվանական այն զույգերը, որոնցում առկա են միևնույն տեսակի բառիմաստային խմբերի բայեր, ասենք, միայն **ասացականներ** /օր., **թլորել-խաբխբել, թլորել-թվատ խոսել/**, **մտածական** /օր., **բևեռել** գիտական կամ որևէ այլ նպատակով

բւեռում մնալ/գիտական ուսումնասիրության նպատակով՝ ՌԴ/, **բւեռել**-1. մեխել, գամել, 2./փխբ./սւեռել/, կենտրոնացնել /միտքը, հայացքը/, **զգացական** /օր.՝ **թնդացնել**-սիրտը բաբախեցնել, **թնդացնել**-բարկացնել, զայրացնել/, **վարքարտահայտման**/օր., **ազատել**-1. ազատագրել, 2. ազատ արձակել/, **ազատել**-/խսկց./ օգնել ծննդաբերության ժամանակ, **դառնալ**-հանդիսանալ, լինել, **դառնալ**-դարձի գալ, համոզմունքի գալ /փխբ./: Առավել են այնպիսիք, որոնք կազմված են տարբեր բառիմաստային խմբերի բայերից /օր., **դարմանել**-/փխբ./ սփռվել, ելք, հնար գտնել /**զգացական**/, **դարմանել**-1. անասուններին հարդ, կեր տալ, 2. ջրած կալում հարդ շաղ տալ/**վարքարտահայտման**, **դիմավորել**-1. եկողին ընդառաջ գնալ, 2. եկողին ընդունել, հրավիրել /**վարքարտահայտման**, **դիմավորել**-անձնավորել /**մտածական**/, **թքոտել** 2. թուք քսելով կեղտոտել /**վարքարտահայտման**, **թքոտել**- 2./փխբ./ նախատել, ամոթանք տալ /**ասացական**/:

Համանունների ձևիմաստային խումբը ձևային առումով, իհարկե, կատարալ է, իմաստային առումով՝ անկատար, սակայն իմաստային մասնակի զուգորդումներն արդեն իսկ վկայում են որոշակի համակարգային առնչությունների մասին, հետևաբար, կարծում ենք, ձևային նմանությունները ժամանակի ընթացքում կարող են ստեղծել նաև իմաստային հետաքրքիր զուգորդումներ:

Համանունությանը մերձ երևույթ է **հարանունությունը**, որի նկատմամբ լեզվաբանական հետաքրքրությունը առաջացել է XIX դարավերջին: Հայագիտության մեջ հարանունությունը, ի տարբերություն մյուս ձևիմաստային խմբերի, պատշաճ ուսումնասիրության չի ենթարկվել, քանի որ համարվել է մասնակի համանունների մի տեսակ (Աղայան 1984: 66):

Հարանուն /пароним=հուն. para՝ մոտ և onyma՝ անուն/ **են ձևով**/ հնչումով, գրությամբ/ **մոտ և իմաստով տարբեր բառերը** (Առաքելյան և այլք 1979: 215): Արիստոտելը հարանուններ էր անվանում նույն արմատից ածանցյալ բառերը: Ըստ Ս. Ա. Էլոյանի՝ հարանուն են կոչվում նման հնչյունակազմ ու արտասանություն ունեցող, բայց իմաստով տարբեր բառերը (Էլոյան 1989: 99): Մեկ այլ սահմանմամբ՝ հարանուն են համարվում համարմատ այն բառերը, որոնք պատկանում են միևնույն խոսքի մասին (Бельчиков, Панюшева 1994: 5): Բայց հարանունները կարող են պատկանել նաև այլ խոսքի մասերի, օր.՝ **դողդոջուն-դողդոջուն, վաղորդայն-վաղորդյան** (Եզեկյան 2003: 244) ևն: Արդի լեզվաբանության մեջ հարանունություն է համարվում տարիմաստ բառերի արտաքին ձևական նմանությունը: Եթե համանունների դեպքում

արտաքին ձևը նույնական է, ապա այս դեպքում նման բառերը իրենց հնչյունակազմով մասամբ են համընկնում (Խլղաթյան 2009: 153-154):

Հետազոտության նյութը մեր կողմից կազմված **ԽԳԻԵ**-ում գործառնվող բայական հարանունների բառային և դարձվածային ցանկն է: Մեզանում, ցավոք, չկա հարանվանական որևէ բառարան, որի անհրաժեշտությունը, անշուշտ զգալի է: Որոշ աշխատանքներում հարանունները մասնակիորեն ներկայացված են բառացանկային կարգով (Բաղիկյան 2012:50-56, Խլղաթյան 2009: 157-160):

Մինչև XX դարը հարանունները բանաստեղծական/ գեղարվեստական խոսքում դիտարկվում էին իբրև համահունչ բառերի միտումնավոր զուգորդումներ, XX դարասկզբին այն դիտարկվում էր խոսքի մշակույթի համատեքստում՝ հնարավոր իմաստաշփոթության նախազգուշացման նպատակով: Հետևաբար ռուս լեզվաբանության մեջ առաջանում է հարանունների գործածության երկու ըմբռնում՝ **լայն և նեղ** (Шмелев 1977: 231): **Լայն ըմբռնմամբ**՝ հարանուն են համարվում մեկ-երկու հնչյունով տարբերվող բառերը, որոնք առավելապես պատկերավորման նպատակով գործածվում են գեղարվեստական գրականության մեջ՝ միտումնավոր նմանեցման միջոցով գործածվելով իբրև ոճական հնարանք: **Նեղ ըմբռնմամբ**՝ հարանուն է համարվում հնչյունակազմով նման/մերձ բառերի՝ չիմացության պատճառով իմաստաշփոթությունը, հետևաբար նաև սխալագործածությունը: Նկատի ունենալով դրանց գործածության վերոնշյալ **լայն** /խոսքային/ և **նեղ** /լեզվական/ ըմբռնումները՝ առաջարկում ենք գործածել «**լեզվական**» և «**խոսքաշարային** /կոնտեքստային/» *հարանուն* տերմինները, ընդ որում *լեզվականը* կկոչենք **հարանուն**, իսկ *խոսքաշարայինը*՝ **հարանվանական բանադարձում** /парономазия/анноминация//: Ի դեպ, լեզվական հարանունները կարող են հիմք դառնալ հարանվանական բառարանների ստեղծման համար, իսկ խոսքային կամ բանաստեղծական հարանունները՝ ոչ, որովհետև ստեղծվում են խոսքաշարի /իմա՝ գեղարվեստական/ պահանջով և բառարանային դրսևորում կարող են ունենալ մասամբ /թերևս միայն որևէ հեղինակի բառապաշարի ուսումնասիրության հետ կապված/:

Լեզվաբանական գրականության մեջ շրջանառվում են **հարանուն** /**հարանունություն** /пароним/ паронимия/, **հարանվանական**

բանադարձում /парономазия/ парономасия/ анноминация//⁹ , **հարանվանական առձգում** /паронимическая аттракция/ տերմինները: **Հարանունությունը** /նեղ առումով՝ միևնույն խոսքի մասին պատկանող, տարանշանակ համարմատ/տարարմատ բառերի *կայուն* զուգորդում, լայն առումով՝ իմաստաշփոթ առաջացնող տարանշանակ բառերի զուգորդում/**բազմակողմանի լեզվաերևույթ է, հարանվանական բանադարձումը** /պատահական հնչյունական նմանություն ունեցող տարարմատ բառերի *միպրումնավոր, անկայուն /փոփոխական* զուգորդում/ **ոճական երևույթ, հարանվանական առձգումը** /երբեմն նույնացվում է հարանվանական բանադարձմանը, գեղարվեստական արտահայտչականության միջոց է, առավելապես բանաստեղծական խոսքում գործածվող հարանվանական միավորների փոխձգողություն, այսինքն՝ ձևով մոտ միավորների իմաստային առնմանում, հնչյունային նմանությունների իմաստավորման «մեխանիզմ» շարակարգային մակարդակում/ **ոճական հնարք** (Конева <https://docplayer.ru/71816874-Paronimiya-paronomaziya-paronimicheskaya-attrakciya-traktovka-ponyatiy-e-a-koneva.html>):

Հարանունների կառուցվածքային մերձությունը պայմանավորում է նրանց իմաստային հարաբերակցությունը: Նույնարմատ/համարմատ բառերը, որոնք պատկանում են միևնույն խոսքի մասին, ձևավորում են փակ բնույթի հարանվանական շարքեր: Խոսքում հատուկ մերձեցման նպատակով կամ պատահական գործածման հետևանքով, որպես կանոն, համարվում են միևնույն կամ մերձ հասկացական-առարկայական պլաններին պատկանող համարմատ բառեր /բայց, իհարկե, բառակազմական բնի ձևաբանական նույն հատկանիշներն ունեցող ոչ բոլոր, այլ մեկ-երկու անդամով/: Հարանունների զուգորդման դեպքում շեշտը դրվում է նրանց իմաստային տարբերությունների վրա, որով և բացահայտվում են նրանց կապակցական առանձնահատկությունները: Հենց դա էլ հարանունությանը հաղորդում է համակարգային բնույթ բառակազմության, բառակապակցության, գաղափարագրության /իդեոգրաֆիա/ մակարդակներում (ЛЭС 1990: 368):

Տարբերակվում են հարանունների **բառային, դարձվածային, շարահյուսական տեսակները**, որոնցից մեզ հետաքրքրում են բառային և դարձվածային տեսակները, բառայինից՝ մասնավորապես **բայական**

⁹ **Парономазия**-ն հունարեն, իսկ **анноминация**-ն՝ լատիներեն անվանումն է, որն ավելի լայն հասկացություն է և ներառում է և՛ հարանվանական բանադարձումը, և՛ պարեմիսեզան/բառային ոճաբանության մեջ հարանուններ, որոնք տարբերվում են իրարից մեկ հնչյունով կամ մեկ վանկով /**парехеза**/, և՛ հոլովույթը /բառակրկնության տեսակ/**полиптон**//:

հարանունները, որոնք գործառվում են **ԽԳԻԵ**-ում: Դրանք հիմնականում կազմում են երկանդամ, եռանդամ շարքեր և հասնում են մոտավորապես մեկ հարյուրյակի: Ըստ բառակազմական հատկանիշի՝ բայական հարանունները **համարմատ** /օր.՝ ազատել-ազատագրել, դիտել-դիտարկել, խոստանալ-խոստովանել, ուղևորվել-ուղղվել, քննել-քննարկել ևն/ և **տարարմատ** /հերկել-հերքել, հրատարակել-հրապարակել, շաղախել-շաղափել, սպրդել-սփրթնել ևն/ են: **Համարմատ** հարանունները, բացի իմաստային տարբերություններից, ունեն նաև **հնչյունային** /տարբերվում են որևէ հնչյունով, օր.՝ գործառել-գործառնել, եղծել-կեղծել, հառել-հառնել, հարցափորձել-հարցուփորձել ևն/, **բառակազմական** առանձնահատկություններ. հարանվանական բայական համարմատ զույգեր են կազմվում միևնույն արմատների /օր.՝ բռնագրավել-բռնագանձել, դիմադարձել-դիմակայել, խորհրդակցել-խորհրդածել ևն/, միևնույն արմատների և տարատեսակ ածանցների զուգորդմամբ /օր.՝ ծրագրել-ծրագրավորել, նորոգել-վերանորոգել, տարբերել-տարբերակել, վերահամոզել-տարհամոզել, ուսանել-ուսուցանել ևն/: Որոշ հարանուններում **վ** բայածանցը իմաստատարբերակիչ դեր է կատարում /օր.՝ բռնել-բռնվել, վերաբերել-վերաբերվել, վրդովել-վրդովվել ևն/: Հարանվանական զույգեր են կազմվում համադրավոր և հարադրավոր բայերից/օր.՝ կոչել-կոչ անել, մեղանչել-մեղա գալ ևն/, միայն հարադրավոր բայերից /օր.՝ անակնկալ/հանկարծակի գալ-անակնկալի /հանկարծակիի գալ, խտրություն դնել-խտրականություն դնել, տեղի տալ-տեղիք տալ ևն/:

Իրենց թվաքանակով **դարձվածային հարանունները** գերազանցում են բառային հարանուններին. դրանք կառուցվածքով իրար մոտ, իմաստով հարաբերակից/առնչակից դարձվածքներ են, որոնք ձևաբանորեն իրարից տարբերվում են իմաստատարբերակիչ դեր կատարող **ը** հոգի առկայությամբ/բացակայությամբ, օր.՝ **աչքի ընկնել**-ուրիշներից առանձնանալ, տարբերվել, նկատվել, **աչքին ընկնել**-պատահաբար մեկի ուշադրությունը գրավել, հանկարծ երևալ (Մարգարյան 1990: 342): Դարձվածքներ կան, որոնք հոդառու և անհոդ ձևերից կազմում են ինչպես դարձվածային տարբերակներ՝ իմաստային առումով չտարբերվելով, այնպես էլ՝ հարանուններ, օր., **հոգի տալ**=սաստիկ փափագել՝ տենչալ/հոգին տալ /նույն նշանակությամբ/ և **հոգին տալ**=հոգին ավանդել, շունչը փչել, մեռնել, **պատիվ պահել**=մեկին հարգել, թույլ չտալ, որ վիրավորեն/պատիվը պահել /նույն նշանակությամբ/ և **պատիվը պահել**=հարզը նկատի ունենալով՝ զիջել, վերապահում անել (Մարգարյան 1990: 343):

Հարանունության համակարգային էությունը դրսևորվում է **ԽԳԻԵ**-ում՝ ծավալվելով **միևնույն ԲԻԽ**-ում /օր., բարբառել-բարբառել, խոստանալ-խոստովանել, պատճառաբանել-պատրվակել ևն/ **ասացական ԲԻԽ**/, հիմնավորվել-հիմնվել, փարորոշել-փարորոշել, ուշադրություն դարձնել-ուշադրություն հրավիրել ևն /**մտածական ԲԻԽ**/, ապաշավել-ապաշխարել, մեղանչել-մեղա գալ, վրդովել-վրդովվել, ցանկանալ-մարմաջել ևն/ **զգացական ԲԻԽ**/, տեղի տալ -տեղիք տալ, բռնագանձել-բռնագրավել, եղծել-կեղծել ևն/ **վարքարտահայտման ԲԻԽ**/, **տարբեր ԲԻԽ**-երում /օր.՝ դիտել /**զգացական ԲԻԽ**/ -դիտարկել /**մտածական ԲԻԽ**/ -խորհրդակցել /**ասացական ԲԻԽ**/ -խորհրդածել /**մտածական ԲԻԽ**/, ուսանել /**մտածական ԲԻԽ**/ ուսուցանել /**վարքարտահայտման ԲԻԽ**/, սպրդել /**վարքարտահայտման ԲԻԽ**/-սփրթնել/ **զգացական ԲԻԽ**/, շաղախել-շաղախել /**վարքարտահայտման ԲԻԽ**/-շաղխաղիկել /**ասացական ԲԻԽ**/ ևն:

Խոսքաշարային հարանունները ստեղծվում են տարած տեքստերում խոսքաշարի պահանջով. դրանք տարիմաստ բառեր են՝ զուրկ իմաստային առնչություններից, իմաստաշփոթությունից, օր.՝ կարճել-կառչել, վարել-վառել, ծաղկել-ծաղկել, պայտել-պայթել, վեհացնել-վերացնել, համբուրել-համբերել, լկվել-լակվել, զարկել-զրկել, կեռանալ-հեռանալ ևն: Բայց ոճական տեսանկյունից նրանք աչքի են ընկնում ոճական լիցքավորմամբ, որի մաստեղծ, հանգաստեղծ ունակություններով, ինչպես նաև ասացվածքների և բառախաղերի կազմությամբ, օր.՝ Ով ալարի, ո՛չ դալարի (Եզեկյան 2003: 245), Նա գիտի զարկե՛լ Ու զրկե՛լ գիտի /ՊՍ/: Բառախաղերում հարանունների գործածության առումով տարակարծություն կա, ըստ որի՝ ոճական առումով հարանվանական զույգերն օգտագործվում են ըստ իրենց արտաքին հնչապատկերի, և իմաստների խաղ տեղի չի ունենում, ինչպես բառախաղերում: Բացի դրանից, եթե բառախաղերը մեծ մասամբ երգիծական կամ ծաղրական բնույթ ունեն, ապա հարանունության մեջ ծաղր հազվադեպ է լինում, օր.՝ Արտը մեզնից՝ դու ես մաճկալ, Հարդը մեզնից՝ ցորենը դու, Հարթը մեզնից՝ կատար դու սեգ... /ՊՍ/ (Խլղայան 2000: 97): Սակայն նույն գրքի այլ՝ «Բառախաղ» բառահոդվածում, Խլղայանը նշում է, որ հարանունները, թեև սակավ, բայց, այնուհանդերձ, բառախաղերում ևս գործածվում են. «Բառախաղերում բացի նույնանուն և բազմիմաստ բառերից օգտագործվում են նաև հարանունները, շրջաբառույթները ևն» (Խլղայան 2000: 30), օր.՝ Գոնե լինե՛ր **ինքնասեր**, Ինքը գրե՛ր, **ինքն ասեր**/ՆՄ/, Գիտե՛մ, գիտե՛մ, Գուշակ էլ ես, **կախարդ էլ ես**. Չէ՞ որ դու ինձ ոտով-գլխով **կախարդել ես** /ՊՍ/ (Պողոսյան 1991: 74-75): Ի պաշտպանություն այս տեսակետի՝ բերենք

նաև Օ. Ս. Ախմանովայի սահմանումը, ըստ որի՝ հարանունները բառեր են, որոնք ձևությամբ կազմի հնչման նմանության կամ մասնակի համընկնման հետևանքով կարող են կա՛մ ոչ ճիշտ ձևով, կա՛մ էլ իբրև բառախաղ /կալամբուր/ գործածվել խոսքում (Ахманова 1966: 313): Ի վերջո, հնչյունական կողմը խոսքի համար ծառայում է ոչ միայն որպես սոսկ ձև, այլև իր բաղկացուցիչների տարբեր փոփոխություններով և զուգորդումներով դառնում է վերաբերմունքի, տրամադրության արտահայտման միջոց (Խլիլայան 1982: 82), այսինքն՝ երկու տեսակետն էլ ընդունելի են:

Համանունների և հարանունների ոճական առանձնահատկությունները ի հայտ են գալիս խոսքաշարում նաև համատեղ գործածության շնորհիվ. եթե բանաստեղծական տողերի հանգավորումը համանուններով բավականաչափ դժվար է, ապա հարանունների գործածության համար սահմանափակումներ չկան /հնչյունակազմի ոչ նույնական լինելը ազատում է նրանց կաշկանդվածությունից և միօրինակությունից (Էլոյան 1989: 104):

Այսպիսով, համանունների և հարանունների /լայն իմաստով/ խոսքաշարում միաժամանակ գործածելու յուրահատկությունը ոճական արժեք ունի և հնարավորություն է ընձեռում շարժման, ռիթմի, հնչեղության, արտահայտչականության, պատկերավորության, դիպոկության, աշխուժության, բառախաղերի ստեղծման համար, իսկ լեզվական առումով /նեղ ըմբռնմամբ/ հարանունների ուսուցումը մեթոդական, գործաբանական արժեք ունի, առավելապես նպաստում է նման լեզվաձևերի ճիշտ ընկալմանն ու տեղին գործածությանը և նպատակաուղղված է լեզվագործածության դժվարությունների հաղթահարմանն ու խոսքի մշակույթի կատարելագործմանը: Բացի դրանից, լինելով բանաստեղծական երկի հնչյունային կառուցվածքի դրսևորումներից մեկը, հարանունությունը հետաքրքրություն է ներկայացնում նաև գործնական տեսանկյունից՝ որպես թարգմանական ոլորտի հիմնահարց (Առուստամյան 2005: 3):

Ամփոփենք: Բայական հարանունները կա՛մ միևնույն բառաբնից, կա՛մ տարբեր բառերից դիպվածաբար կամ ոճական առումով միտումնավոր կազմված բառազույգեր/բառաշարքեր են, որոնք իրենց կազմում ունեն տարբեր ձևույթներով արտահայտված/արմատ՝ **պահել-պահպանել**, **ածանց՝ գերադասել-գերակայել**// **են/ ընդհանուր** հնչյունախումբ, որոնք լեզվական հարանուններում կազմում են կայուն բաղադրամաս, իսկ խոսքաշարայինում՝ անկայուն կամ փոփոխական: Ձևային ու իմաստային տեսանկյուններից հարանունները ի հայտ են բերում լեզվական և խոսքաշարային հարուստ առանձնահատկություններ

և հարաբերվում են մյուս ձևախմբատային խմբերին՝ համանիշներին, հականիշներին, համանուններին և՛ ձևային, և՛ իմաստային և՛ շարքակազմ բաղադրիչների քանակային առումներով: Հարանունները **ձևային առումով համանիշներից** /ձևով տարբեր/, **հականիշներից** /ձևով տարբեր/ և **համանուններից** /ձևով նույնը/ տարբերվում են նրանով, որ **ձևով համեմատաբար մոտ են, բայց ոչ նույնը, իմաստային առումով** տարբերվում են **համանիշներից** /որոնք իմաստով մերձ են, միևնույն երևույթի իմաստային, ոճական տարբերությունների արտահայտություններն են/, **հականիշներից** /իմաստով հակադիր/, **համանուններից** /իմաստով տարբեր/ նրանով, որ իմաստային տարբերությունները դիպվածային կամ լեզվական տարբեր գործոններով /բառակազմական, իմաստափոխական, ժողովրդական ստուգաբանության ևն/ պայմանավորված փոխազդեցության հետևանք են: Հարանունները **ձևային առումով որոշ ընդհանրություններ** ունեն համանունների հետ, **իմաստային առումով**՝ համանիշների և մասամբ՝ հականիշների հետ. ուղղակի՝ համանիշների իմաստային մերձությունը առավելագույն է, հարանուններինը՝ նվազագույն. հարանունների դեպքում շեշտը դրվում է հիմնականում իմաստային տարբերությունների վրա: Երկուսին էլ հատուկ է ոճական-գործառական տարբերակումը, բայց համանիշները տարբերվում են միայն ոճական նրբերանգներով, երբեմն որոշակի խոսքաշարերում կարող են փոխարինել միմյանց կամ էլ մի քանի համանիշի գործածումը նույն խոսքաշարում կարող է լրացնել, ճշգրտել լեզվաերևույթը /առարկա, հասկացություն/: Մինչդեռ հարանունների միաժամանակյա գործածումը ոչ միայն ճշգրտում է իմաստը, այլև բացահայտում է նշանակությունների տարբերությունը: Հարանունների շարքը կազմող բաղադրիչները քանակային առումով տարբերվում են համանիշներից /բազմանդամ/, մոտ են հականիշներին /երկանդամ/, բայց տարբերվում են նրանով, որ կարող են լինել նաև եռանդամ, որով էլ մոտ են համանուններին:

Լեզվի ամբողջ բառապաշարը կազմում է բաց համակարգ, և այդ համակարգի մեջ բառաիմաստային խմբերը հանդես են գալիս որպես մեկ կամ մի քանի հատկանիշով հարաբերակցվող փոքր ենթահամակարգեր, որոնց տարբերություններն ու հակադրությունները զուգակցվում են նմանություններով: Այսպիսով, «համակարգը» օգնում է մեզ ավելի լավ պատկերացնելու այն բարդ, ամբողջական մեխանիզմը, ինչպիսին լեզուն է, որի բաղկացուցիչ մասերը, տարբեր մակարդակները և նրանց տարրերը գտնվում են փոխադարձ կապի, փոխպայմանավորվածության և փոխազդեցության մեջ (Շալունց 1977: 34):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Էդ. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:
2. Առաքելյան Վ. Դ. և այլք, Ժամանակակից հայոց լեզու, Հնչյունաբանություն և բառագիտություն, հ. 1, Եր., 1979:
3. Առուստամյան Կ. Ս., Հարանունները 20-րդ դ. հայ քնարերգության մեջ, ք. գ. թ. հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2005:
4. Բաղիկյան Խ. Գ., Ուսումնական դարձվածաբանական բառարան, Ե., 2002:
5. Բաղիկյան Խ. Գ., Ճիշտ խոսենք հայերեն, Եր., 2012:
6. Գևորգյան Ե. Հ., Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, Եր., 1978:
7. Դոխոյան Ռ. Յ., Ասացական բայերի բառաիմաստային խումբը արդի հայերենում, Եր., 2014:
8. Եզեկյան Լ. Կ., Ոճագիտություն, Եր., 2003:
9. Էլոյան Ս. Ա., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989:
10. Խլղաթյան Ֆ. Հ., Հնչյունական ոճաբանություն, Լեզվի և ոճի հարցեր, հ. VI, Եր., 1982:
11. Խլղաթյան Ֆ. Հ., Ոճաբանական բառարան, Եր., 2000:
12. Խլղաթյան Ֆ. Հ., Ժամանակակից հայոց լեզու, Մաս Ա, Եր., 2009:
13. Մարգարյան Ա. Ս., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990:
14. Շալունց Ռ. Ն., Համանուն բառերը ժամանակակից հայերենում (թեկնածուական ատենախոսություն), ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Եր., 1972:
15. Շալունց Ռ. Ն., Համանուն բառերը ժամանակակից հայերենում, Լեզվի և ոճի հարցեր, հ. 4, Եր., 1977:
16. Շալունց Ռ. Ն., Արդի հայերենի համանունների դպրոցական բառարան, Եր., 1980:
17. Պողոսյան Պ. Մ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Գիրք երկրորդ, Ե., 1991:
18. Սուքիասյան Ա. Մ., Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Եր., 1999:
19. Ахманова О. С., Словарь лингвистических терминов, Советская энциклопедия, М., 1966.
20. Бельчиков Ю. А., Панюшева М. С., Словарь паронимов современного русского языка, М., Русский язык, 2002.

21. Лексико-семантические группы русских глаголов, Учеб. слов.-справ. / Под общ. ред. Т. В. Матвеевой, Свердловск, 1988.
22. Лингвистический энциклопедический словарь /ЛЭС /, М., 1990.
23. Шмелев Д. Н., Современный русский язык, Лексика, М., 1977.
24. Паронимия, паронимазия, паронимическая аттракция: Трактовка понятий, Е.А. Конева, <https://docplayer.ru/71816874-Paronimiya-paronomaziya-paronimicheskaya-attrakciya-traktovka-ponyatiy-e-a-koneva.html>.

REFERRNCES

1. Aghayan E'd. B., Y'ndhanowr & haykakan bar'agitowt'yown, E., 1984:
2. Ar'aqelyan V. D. & aylq, Jhamanakakic hayoc lezow, Hnchy ownabanowt'yown & bar'agitowt'yown, h. 1, E., 1979:
3. Ar'owstamyán K. S., Haranownnery' 20-rd d. hay qnarergowt'yan mej, b. g. t'. haycman atenaxosowt'yan seghmagir, E., 2005:
4. Badikyan X. G., Owsowmnakan dard'vac'abanakan bar'aran, E., 2002:
5. Badikyan X. G., Twisht xosenq hayeren, E., 2012:
6. Gevorgyan E. H., Jhamanakakic hayoc lezvi hamanoownneri bar'aran, E., 1978:
7. Doxoyan R'. Y., Asacakan bayeri bar'aimastayin xowmby' ardi hayerenowm, E., 2014:
8. Ezekyan L. K., Otowagitowt'yown, E., 2003:
9. E'loyan S. A., Jhamanakakic hayereni bar'ayin otowabanowt'yown, E., 1989:
10. Xlghat'yan F. H., Hnchyownakan otowabanowt'yown, Lezvi & otwi harcer, h. VI, E., 1982:
11. Xlghat'yan F. H., Otowabanakan bar'aran, E., 2000:
12. Xlghat'yan, F. H., Jhamanakakic hayoc lezow, Mas A, E., 2009:
13. Margaryan A. S., Jhamanakakic hayoc lezow, E., 1990:
14. Shalownc R'. N., Hamanoown bar'ery' jhamanakakic hayerenowm /t'eknac'owakan atenaxosowt'yown/, GAA lezvi institowt, E., 1972:
15. Shalownc R'. N., Hamanoown bar'ery' jhamanakakic hayerenowm, Lezvi & otwi harcer, h. 4, E., 1977:
16. Shalownc R'. N, Ardi hayereni hamanoownneri dprocakan bar'aran, E., 1980:
17. Poghosyan P. M., Xosqi mshakowyt'i & otowagitowt'yan himownqner, Girq erkrord, E., 1991:
18. Sowqiasyan A. M., Jhamanakakic hayoc lezow (Hnchyownabanowt'yown, bar'agitowt'yown, bar'akazmowt'yown), E., 1999:

19. Ahmanova O. S., Slovar' lingvističeskikh terminov, Sovetskaja jenciklopedija, M., 1966.
20. Bel'chikov Ju. A., Panjusheva M. S., Slovar' paronimov sovremennogo russkogo jazyka, M., Russkij jazyk, 2002.
21. Leksiko-semantičeskie gruppy russkih glagolov, Učeb. slov.-sprav. / Pod obshh. red. T. V. Matveevoj, Sverdlovsk, 1988.
22. Lingvisičeskij jenciklopedičeskij slovar'/LJeS /, M., 1990.
23. Shmelev D. N., Sovremennyj russkij jazyk, Leksika, M., 1977.
24. Paronimija, paronomazija, paronimičeskaja attrakcija: Traktovka ponjatij, E.A. Koneva,
<https://docplayer.ru/71816874-Paronimiya-paronomaziyparonimičeskayaaattrakciyatraktovkaponyatiyeakoneva.html>

РУЗАННА ДОХОЯН - ПРОЯВЛЕНИЯ ОМОНИМИИ И ПАРОНИМИИ В СЕМАНТИЧЕСКОМ ПОДПОЛЕ РЕЧЕВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

Ключевые слова: семантическое подполе речевой деятельности, лексико-семантические группы глаголов говорения, мышления, чувства, поведения, лексические, фразеологические, грамматические омонимы, паронимия, лексические, фразеологические паронимы

Цель статьи - изучить омонимию и паронимию, как виды формосемантических взаимоотношений, в контексте семантического подполя речевой деятельности. Сначала представляется история изучения омонимии, описываются лексические, фразеологические, грамматические /морфологические /глагольные// виды омонимов, функционирующие в вышеупомянутом подполе. Затем представляется история изучения паронимии. Описываются широкое/контекстное/ и узкое/языковое/ понимание паронимии, лексические, фразеологические паронимы, функционирующие в вышеупомянутом подполе. И также говорится о стилистических особенностях омонимов и паронимов.

RUZANNA DOKHOYAN - THE MANIFESTATION OF HOMONYMY AND PARONYMY IN THE SEMANTIC SUBFIELD OF SPEECH ACTIVITY IN MODERN ARMENIAN

Keywords: semantic subfield of speech activity, lexico-semantic groups of verbs of "saying", "thinking", "feeling", "behaviour"; lexical, phrasal, grammatical homonyms, paronymy, lexical, phrasal paronyms

The aim of the article is to research homonymy and paronymy as types of morphosemantic interrelations in the context of semantic subfield of speech

activity. First the study of history of homonymy is introduced and the lexical, phrasal and grammatical /morphological /verbal// types of homonyms functioning in the semantic subfield of speech activity are described. Then the study of history of paronymy is introduced, the notions of wide /contextual/ and narrow/lingual/ paronymy are described and the lexical and phrasal paronyms functioning in the above-mentioned subfield. We also speak about the stylistic particularities of homonymy and paronymy.

Ներկայացվել է՝ 22.02.2021
Գրախոսվել է՝ 22.02.2021